

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌԱՆՆԵՐ

(1970 թ. հուլիս-դեկտեմբեր)

Ք Ո Ւ Լ Ղ Ա Ր Ի Ա

Բուլղար ժողովուրդը բուլղարահայության հետ մեկտեղ տոնել է Սովետական Հայաստանի 50-ամյակը: Բուլղարական կենտրոնական մամուլը և ռադիոն հոգևածներ և հաղորդումներ հրապարակել՝ նվիրված Հայաստանի 50-ամյակին: Համապատասխան նյութեր են տպագրել «Հեմլեդելսկո Զեմե», «Ռաբոտնիչեսկո դելո» և «Օտեչեստվեն ֆրոնտ» թերթերը:

Բուլղարիայի մի շարք քաղաքներում կայացել են հանդիսավոր ժողովներ, որ կազմակերպվել են հայրենական ճակատի, բուլղարասովետական բարեկամության կազմակերպության և բուլղարահայ ծերանա մշակութային միության կողմից:

Սոֆիայում հանդիսավոր նիստը բացել է Բուլղարիայի քաղաքային կոմիտեի նախագահ Իվան Պալիսկին, զեկուցումով հանդես է եկել Բուլղարիայի ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի մինիստրի տեղակալ Կիրիլ Նեստորովը:

Այնուհետև տեղի է ունեցել գրական-գեղարվեստական ճոխ համերգ:

«Լյաբեր», 29 դեկտեմբերի

* * *

Բուլղարական Նարոդնա միացե՞ս հրատարակչությունը լույս է ընծայել «Հաղարան բըրու — Հայկական ժողովրդական հեքիաթներ» շքեղագրող ժողովածուն: Հատորը հրատարակվում է ռեքիաթներ ողջ աշխարհից՝ մատենաշարով և ընդգրկում է հայկական 44 հեքիաթ: Թարգմանությունը ուսերենից կատարել է Դոնա Սիլվան, իսկ նկարազարդումները՝ նկարիչ Ասեն Ստարեյսկին: Ժողովածուն լույս է տեսել 30 հազար տպաքանակով, Սովետական Հայաստանի 50-ամյակի առիթով:

«Լրաբեր», 2 հունվարի 1971

Ռ Ո Ւ Մ Ի Ն Ի Ա

«Նոր կյանք» հայտնում է, որ Բուխարեստում լույս է տեսել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը ռումիներեն: Այն թարգմանել է Հ. Մաթեյը: Հրատարակված է երեք հատորով, «Ունիվերս» հրատարակչության կողմից: Նախարանը գրել է գրական քննադատ Նիկոլան Պալուտը:

«Նոր կյանք», 6 նոյեմբերի

* * *

Նոյեմբերի 29-ին Բուխարեստում տեղի է ունեցել հանդիսություն՝ նվիրված Սովետական Հայաստանի 50-ամյակին, որի առթիվ զեկուցում է կարդացել Բուխարեստի համալսարանի դասախոս դոկտ. Գրիգոր Բամպուքճյանը: Հանդիսությունն ավարտվել է գեղարվեստական բաժնով:

«Նոր կյանք», 4 դեկտեմբերի

Հ Ո Ւ Ն Գ Ա Ր Ի Ա

Բուդապեշտի «Նվրոպա» հրատարակչությունը լույս է ընծայել Հովհ. Թումանյանի երկերի ժողովածու՝ «Աղավնու վանք» խորագրով, որում տեղ են գտել մեծ բանաստեղծի լեզենդները, քառյակները, բանաստեղծությունները: Ժողովածուն կազմել է Երևանի պետական համալսարանի նախկին ասպիրանտ Պալ Սալմաշին, որը Թումանյանի կյանքի և ստեղծագործության մասին գրել է ակնարկ: 1968 թ. նա հրատարակել է «Հայ բանաստեղծություններ» անթոլոգիան:

«Աշխարհ», 18 հուլիսի

* * *

«Նոր օրից» տեղեկանում ենք, որ հունգարական «Իլետ Իշ Տուրդոմանի» («Կյանք և գիտություն») հանդեսը տպագրել է Կորբուլի Իոմոկոսի հանգամանալից հոգվածը՝ «Հունգարահայեր» վերնագրով: Հոգվածում պատմական ակնարկով տրված է հունգարահայության անցած ուղին: Թուրք-մոնղոլական արշավանքնե-

, որից հալածված հայերը բնակություն են հաստատում Տրանսիլվանիայում և 12 տարվա ընթացքում ստեղծում են իրենց քաղաքը՝ էրմենվարոշը կամ Արմենպոլիսը 1700 թ. սկզբներին: Դարեր շարունակ նրանք ձգտել են պահպանել հայկական ավանդույթները: Հայ համայնքը Հունգարիայում աչքի է ընկել իր արհեստներով ու վաճառականությամբ: Շատ հայեր մասնակցել են երկրի քաղաքական կյանքին, ազատագրական պայքարին:

Հեղինակը նշել է. որ հունգարահայերը ունեցել են բազմաթիվ նշանավոր դեմքեր՝ ակադեմիայի անդամներ, քաղաքական գործիչներ, գրողներ ու պատմաբաններ: 1920 թ. կազմակերպվել է «Հունգարահայերի միությունը»:

«Նոր օր», 11 սեպտեմբերի

Գ Գ 2

Վերջերս Բեռլինում Ռ. Աթայանի ղեկավարությամբ կատարվել է Կոմիտասի 137-րդ Սաղմոսը, որի բնագիրը գրված է գերմաներեն: Այդ սաղմոսը մայիսին հնչել է նաև Բեռլինի Ս. Բարդուղիմեոսի տաճարում՝ Հերբերդ Հելլինկերալի ղեկավարությամբ:

«Զահակիր», 30 հուլիսի

Լ Ի Բ Ա Ն Ա Ն

Լիբանանում մի խումբ երիտասարդներ հիմնել են մշակութային ընկերություն, որը կոչել են «Էրեբունի» անունով: Նոյեմբերի 14-ին կատարվել է ընկերության բացումը:

Հանդիսության նախագահ՝ Լեոնալիբանանի նահանգապետ պր. Ղալեպ Թուրքը դրվատանքի և խրախուսանքի խոսքերով դիմել է հայ երիտասարդներին, որպեսզի նրանք օգնեն հայ և արաբ ժողովուրդների մշակույթի վերելքին: Այնուհետև օր. Վարդուկ Մուճուկյանը կարդացել է արաբերեն ուղերձ, շնորհակալություն հայտնելով Լեոնալիբանանի նահանգապետին, որը միշտ քաջալիրել է երիտասարդական նման ձեռնարկները: Վերջում տրվել է հոխ համերգ:

«Զարթոնք», 3 դեկտեմբերի

Ա Մ 2

1970 թ. հունիսի 3-ին մահացել է եգիպտացի տաղանդավոր նկարիչ Աշուտ Զորյանը:

«Նոր օր», 12 հունիսի

Ս Ի Բ Ի Ա

Հալեպում նազար նազարյանի թարգմանությամբ լույս է տեսել Դանիել Վարուժանի «Հացին երդը» բանաստեղծությունների ժողովածուն արաբերեն: Դրքի սկզբում թարգմանիչը ա-

րար ընթերցողին ծանոթացնում է Վարուժանի կյանքին ու գործունեությանը:

«Արարատ», 5 հոկտեմբերի

Ի Բ Ա Ն

Հովհաննես Իսմայանի 100-ամյակի կապակցությամբ Թեհրանում պարսկերեն լույս է տեսել մի ժողովածու, ուր ղեկավարված են «Փարվանա», «Ախթամար», «Անուշ» պոեմները: Թարգմանիչն է Ալեք Խաչատրյանը, առաջարկը գրել է Ղուկաս Կարապետյանը, ձևավորել է նկարիչ Դեմիր:

«Պայքար», 28 հունիսի

* * *

Վախթանգ Անանյանի որսորդական պատմվածքները թարգմանվել են պարսկերեն, թարգմանիչն է Արա Հովհաննիսյանը: Այդ պատմվածքների մի մասը շարունակաբար տպագրվում է նաև Թեհրանում լույս տեսնող «Շեքեր վե թուրիյաթ» («Որս և բնություն») պատկերազարդ ամսագրում:

«Աշխարհ», 2 դեկտեմբերի

Թ Ո Ի Բ Ի Ա

Ստամբուլում համերգներ է տվել Վառնայի պետական օպերայի վելսավոր դերակատարներից մեկը՝ մեցո-սոպրանո օր. Նվարդ Հմայակը:

«Աշխարհ», 14 հոկտեմբերի

Հ Ո Լ Ա Ն Դ Ի Ա

Օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 5-ը Հոլանդիայի Հերթոկնպոշ քաղաքում տեղի է ունեցել երդի միջազգային մրցույթ, որին մասնակցել են վանազան երկրներից ժամանած 120 երդիչ-երգչուհիներ:

Լիբանանահայ անվանի երգչուհի Սոնա Ղազարյանը շահել է առաջին մրցանակը և ստացել է ոսկե մեդալ ու վկայագիր:

«Պայքար», 26 սեպտեմբերի

Ֆ Բ Ա Ն Ս Ի Ա

Ֆրանսիական ակադեմիայի անդամներ Մարսել Բրիոնի, Անդրե Շամսոնի, Ռենե Հիյենեյի, Լուվրի թանգարանի տնօրեն Անդրե Բարոյի և արվեստի ասպարեզում բազմաթիվ այլ հեղինակավոր անձանց հովանավորությամբ Փարիզում հրատարակվում է «Մուսաները» արվեստների հանրագիտարանը, որը լույս է տեսնում առանձին պրակներով՝ յուրաքանչյուր շորեքշաբթի օրը:

1970 թ. հունվարի 21-ի պրակը գրիթե ամբողջովին նվիրված է հայկական արվեստին: Առանձին պրակներում խոսվում է հայ ճարտա-

քաղաքային, քանդակագործության, նկարչության, կիրառական արվեստի և գորգագործության մասին:

Հատորում բերված են Հովհաննիսյանի, էջմիածնի մայր տաճարի, Անիի Կաթողիկե, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցիների և մի շարք այլ հուշարձանների, հայկական մանրանկարչության նրժուշների, ֆրանսիական թանգարաններում գտնվող կիրառական արվեստի հազվագյուտ թանկարժեք նմուշների և Փարիզում գտնվող մի գորգի բարձր որակով կատարված գունավոր լուսանկարները:

«Պայքար», 21 հուլիսի

* * *

«Ուրարտուից մինչև մեր օրերը» հայկական արվեստի ցուցահանդեսի մասին փարիզյան մամուլը, ձայնասփյուռն ու հեռուստատեսությունը գնահատանքի քերձ խոսքեր են արտահայտել: Հեռուստատեսությամբ, անվանի արվեստագետ Մաքս Պոլ Ֆուլշի մեկնաբանությամբ, հաղորդում է տրվել գունավոր նկարներով՝ ցուցահանդեսում ներկայացված արվեստի գործերից բաղմամբիվ առարկաների, մանրանկարների ցուցադրությամբ:

«Աշխարհ», 17, 28 հոկտեմբերի

* * *

Դեկտեմբերի 6-ին Փարիզի Փլեյել սրահում մեծ հանդիսավորությամբ տոնվել է Սովետական Հայաստանի 50-րդ տարեդարձը: Սրահում հավաքվել էին 3.000 փարիզահայեր: Նախագահությունում տեղեր են գրավել Ֆրանսիայի պաշտոնական անձինք, ինչպես նաև սովետական դեսպանատան ներկայացուցիչներ ու Հայաստանի պատվիրակության անդամներ: Հանդիսավոր նիստեր տեղի են ունեցել նաև Մարսելում և մի շարք այլ քաղաքներում:

«Աշխարհ», 9, 16, 19 դեկտեմբերի

ԱՆՔԻԼԻԱ

Հոնգոնի «Թայմս և Հատսըն» հրատարակչությունը լույս է ընծայել պատմագետ և բյուզանդագետ Սիրարիի Տեր-Ներսեսյանի նոր գործը՝ «Հայկո» վերնագրով, «Հնագույն ժողովուրդներ և վայրեր» մատենաշարով: Երբքը բաղկացած է 126 էջից, կան հնագույն Հայաստանի քարտեզներ, բնանկարներ, ճարտարապետական դժագործություններ, պատմական հուշարձանների նկարներ և մանրանկարչության նմուշներ:

Հատորն ունի հետևյալ ենթավերնագրերը՝ Փրկիրը և նրա վաղեմի բնակիչները, Հայաստանի պատմությունը, Կիլիկիայի թագավորություն:

17 Հանդես, N 1

ներ. Ընկերություն և տնտեսություններ. Կրոն-Գրականություն և ուսմունք. Ճարտարապետություն. Քանդակագործություն. Նկարչություն: Արսեն վրդ. Պերպերյանը գրում է. «Պրոֆ. Ս. Տեր-Ներսեսյանի այս վերջին աշխատությունը հանդիսանում է անգլերեն լեզվով գրված հայ մշակույթի պատմության նվիրված աշխատություններից լավագույններից մեկը, նույնիսկ լավագույնը»:

«Նոր օր», 14 ապրիլի

* * *

«Պայքարը» հայտնում է, որ վերջերս Հոնգոնում կազմակերպվել է թատերական խումբ, որի ղեկավարն ու բեմադրողն է Հովհաննես Փիլիկյանը:

Այս թատերախումբը առաջին անգամ ներկայացրել է Հովհաննես Թումանյանի «Կիկոսի մահը», որը ներկայացման է վերածել բեմադրողի կինը տիկին Կելլ Բատրմախերը: Ներկայացումը տեղի է ունեցել հուլիսի 7-ին, Հոնգոնի Նյու Արթս Լես թատրոնում:

«Պայքար», 29 օգոստոսի

* * *

Անգլիայի Հնագիտական ընկերության հրավերով Հոնգոն է եկել պրոֆ. Սիրարիի Տեր-Ներսեսյանը: Ընկերությունը, բարձր գնահատելով պրոֆ. Տեր-Ներսեսյանի պատարած աշխատանքը հայկական և բյուզանդական արվեստների ուսումնասիրության գծով, գիտնականին պարգևատրել է ոսկե շքանշանով՝ Արվեստների արքայական ակադեմիայում ապրիլի 24-ին տեղի ունեցած իր ընդհանուր ժողովում:

Ընկերության նախագահ Ֆրանսիս Ուորմերը, շքանշանը հանձնելով պրոֆ. Տեր-Ներսեսյանին, ասել է. «Հայկական արվեստի մասին շատ քիչ գաղափար ունեինք մինչև որ պրոֆ. Տեր-Ներսեսյան իր աշխատասիրություններով եկավ նոր հորիզոն բացելու հայկական միջնադարյան արվեստի վրա»:

Անգլիայի Հնագիտական ընկերության հիմնադրման օրից (1707 թ.) ի վեր պրոֆ. Տեր-Ներսեսյանը երկրորդ կին գիտնականն է, որ արձանացել է այդ բարձր պարգևին:

«Զահակիր», 24 սեպտեմբերի

* * *

1969 թ. հոկտեմբերից սկսած Հոնգոնում Փրերըզ հրատարակչության կողմից և գործակցությամբ, մաս առ մաս սկսել է լույս տեսնել Անգլիայի Պատերազմական թանգարանի՝ «Առաջին համաշխարհային պատերազմի պատմությունը», որը լույս է ընծայվում 128 մասով, ուժ մեծածավալ հատորով:

1969 թ. աշնանը անգլիական շատ թերթերում ծանուցումներ են երևացել այս գրքի մասին: Հրատարակիչները հայտնում են, որ ձեռքի տակ ունեն նորաբաց գաղտնի վավերաթղթեր և արխիվներ:

Խմբագրական կազմի մեջ և խմբագրության աշխատակիցների թվում են մասնագետներ Ամերիկայից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Թուրքիայից և Վաշինգտոնի կոնգրեսի գրադարանի աշխատակից Ա. Սարգսյանը:

Անցյալ շաբաթ լոնդոնում լույս է տեսել երրորդ հատորի 16-րդ թիվը, որի խորագիրն է՝ «Ցեղասպանությունը 1915-ին»: Այս բաժնում զետեղված է Ա. Սարգսյանի հոդվածը «Ցեղասպանությունը Թուրքիոյ մեջ»: Այստեղ հիշատակված է «Արմենոսայտ» զրբույկը, որը պարունակում է Ջավեն Մսրլյանի և Վազգեն Այգունիի օտար լեզուներով հոդվածները և Ժիրայր Նաիրիի արաբերեն մի հոդվածը:

«Ջարթոնք», 1 հոկտեմբերի

* * *

Նոյեմբերի 26-ին լոնդոնի սովետական դեսպանատունը Հայաստանի 50-ամյա հորելյանի առթիվ հրավերք է կազմակերպել, որին ներկա են եղել լոնդոնահայության պաշտոնական բոլոր մարմինների ներկայացուցիչները, մոտ 200 հոգի: Դեսպանատան սրահներում կազմակերպվել է Հայաստանը ներկայացնող նկարների և գրքերի ցուցահանդես, հնչել է հայկական երաժշտություն: Հայ ժողովրդի պատմական անցյալի, ներկայի և նվաճումների մասին տեղի են ունեցել մի շարք ելույթներ:

«Աշխարհ», 12 դեկտեմբերի

* * *

«Ջարթոնքից» տեղեկանում ենք, որ անգլիական նոր հանրագիտարանում հայերի մասին տեղ գտած կոպիտ սխալները ուղղվել են:

Չորս տարի առաջ այդ հանրագիտարանը հայերին ներկայացրել էր որպես վաչկատուն ցեղ և հայերի ցեղասպանությունը տվել խեղաթյուրված ձևով:

Լոնդոնի հայ երիտասարդաց միության ատենապետ Հայկ Մսրլյանը մասնավոր ձևով դիմում է հանրագիտարանի խմբագրությանը, որպեսզի սրբագրվեն այդ հոդվածի սխալները: Խմբագրությունը հոդվածը ներկայացնում է Մսրլյանին, որը և Արսեն վրդ. Պերպերյանի հետ միասին անհրաժեշտ փոփոխություններ է կատարում և նկարներ տրամադրում խմբագրությանը: Այժմ հանրագիտարանի 12-րդ համարում չորս տարի առաջ թույլ տրված սխալները ուղղված են:

«Ջարթոնք», 25 դեկտեմբերի

Ի Տ Ա Լ Ի Ա

Դեկտեմբերի 10-ին Միլանի «Հայ տան» սրահում հանդիսավորությամբ տոնվել է Սովետական Հայաստանի հիսնամյակը:

Հանդիսավոր բաժնից հետո տրվել է ճոխ համերգ, որին մասնակցել են հայ և օտարազգի արվեստագետներ: Հանդեսը կազմակերպել են իտալահայ կազմակերպությունների վարչությունները:

«Աշխարհ», 23 դեկտեմբերի

Ա Վ Ս Տ Ր Ի Ա

Վիեննահայոց հոգևոր հովիվ Մեսրոպ Ս. վրդ. Գ. Գրիգորյանի հետ «Ջարթոնքի» թղթակցի ունեցած զրույցից տեղեկանում ենք, որ Ավստրիայի հայ գաղութը բաղկացած է 80 ընտանիքներից՝ 300 հոգի: Կան նաև արտասահմանից եկած 100 ուսանողներ (մեծ մասամբ Պարսկաստանից), որոնցից 30-ը ուսանում են Գրացում, իսկ 75-ը՝ Վիեննայում:

Եկեղեցուն կից մշակութային սրահում տեղի են ունենում հավաքույթներ, տոնակատարություններ, բանախոսություններ և այլն: Երիտասարդները ամեն ուրբաթ օր հավաքվում են այնտեղ «Հայկական գիշեր» անցկացնելու համար: Սրահը ամեն շաբաթ տրամադրվում է ուսանողներին, իսկ կիրակի օրերը մանուկներին ներկայացնող տեղություններում հայերեն դասեր են տրվում:

Դադութն ունի կառավարող եկեղեցական վարչություն, Տիկնանց միություն, Ուսանողաց միություն և Հ.Բ.Ը. միության մասնաճյուղ:

«Ջարթոնք», 25 սեպտեմբերի

Բ Բ Ա Ջ Ի Լ Ի Ա

Բրազիլիայի «Օ'Գլուպո» թերթը իր հուլիսի 11-ի համարում հրատարակել է լոնդոնի իր. թղթակցի հոդվածը՝ «Հայերը՝ ազդ մը, որ կպայքարի իր գոյատևման համար» խորագրով:

Հոդվածը անդրադառնում է գլխավորապես թուրք ցեղասպանությանը, որին զոհ գնացին հայերը: Նկարագրված են թուրքերի բարբարոսությունները, հայերի դիմադրական կորովը և վերապրելու կամքը:

«Ջարթոնք», 4 հոկտեմբերի

Ա Վ Ս Տ Ր Ա Լ Ի Ա

Հայերը Ավստրալիայում բնակություն են հաստատել XIX դարի երկրորդ կեսից, սակայն գաղթաշախի ազգային կյանքը հազիվ 15 տարվա պատմություն ունի: Դրա սկիզբը կարելի է համարել 1965 թ., երբ Սիդնեյում բացվում է հայկական եկեղեցին: Մի փոքր ուշ հիմնվում է Մելբուրնի Ս. Աստվածածին եկեղեցին: Եկեղեցիներին կից բացվում են միօրյա դպրոցներ, դրադարաններ, ստեղծվում են եկեղեցական խոր-

Հուրդներ, տիկնանց, երիտասարդական միություններ: Այդ կազմակերպությունները զրազվում են հայ զաղթօջախի կյանքով, կազմակերպում երեկոներ, դասախոսություններ, համերգներ, կինոդիտումներ և այլն: Հայկական բարեգործական ընդհանուր միության մասնաձյուղը, որն ունի 300 անդամ, զրազարան, թատերական և պարի խումբ, մեծապես օգնում է զաղթօջախի զանազան միջոցառումներին:

Կաղթօջախում ամեն տարի նշվում են Ապրիլի 24-ը, հայ զրեթի զյուտի, Վարդանանց ճակատամարտի տարեդարձերը: 1969 թ. Մելրուների երիտասարդաց միությունը կազմակերպել է հանդեսներ՝ նվիրված Ռումանյանի և Կոմիտասի 100-ամյա հորելյաններին:

«Սևան», 21 հոկտեմբերի

Ա. Մ. Ն.

Նյու-Ջերսիի նահանգի հայկական միօրյա զպրոցների ուսուցիչները կազմել են ուսուցչական միություն, որը ծրագրել է հրատարակել առաջին և երկրորդ դասարանների համար ընթերցարաններ, պատմության դասագրքեր, հայ բանաստեղծների և զրոգների զործեր անգլերեն թարգմանությամբ:

«Ջահակիր», 30 հոկտեմբերի

* * *

Հոս-Անչելուսի հայտնի Յու. Սի. էլ. էյ համալսարանում ստեղծված հայազիտական ամբիոնի և Աղզագրական թանգարանի վարչության կողմից կազմակերպվել է հայ հին մշակույթը պատկերող ցուցահանդես: Այդտեղ ներկայացված են արծաթագործ նկարներով եկեղեցական թագեր, միջնադարյան հայերեն ձեռագրեր, խորանի վարագույրներ, վարպետներն քանդակված արուրե և պղնձ անոթներ և այլ նյութեր, որոնց բացատրությունները տրված են, նշելով թվականներն ու վարպետների անունները: Ցուցահանդեսի երկրորդ սրահում ցուցադրված են միջնադարյան հայ մանրանկարչության և ճարտարապետության նմուշներ:

«Արարատ», 28 հոկտեմբերի

* * *

Գրիգոր Զոհրապի զուտր տիկ. Դուրես Լիերմանը, որն իր մոր հետ ապրում է Նյու-Յորքում, 1915 թ. եղեռնի զոհ դարձած իր հոր հիշատակը հավերժացնելու համար Նյու-Յորքի Կոլումբիա համալսարանի կրթաթոշակների հանձնաժողովի տրամադրության տակ է զրել մի զումար, որպեսզի ամեն տարի կրթաթոշակ հատկացվի զոկտորական աստիճանի համար պատրաստվող հայ ուսանողներին:

17

1970—71 ուսումնական տարվա առաջին թեկնածու րնտրվել է հալեպահայ երիտասարդ զիտական Հովհաննես Նզոյանը, որը պատրաստվում է զոկտորի աստիճան ստանալ էլեկտրական նարտարվեստի զծով:

«Սևան», 9 սեպտեմբերի

* * *

Նյու-Յորքում հրատարակվում է նոր ամսագիր՝ «Արմինիերն Դայջեստ» անունով: Ընթերցողներին ուղղված իր խոսքի մեջ խմբագրությունն ասում է. «Մենք ուրախ ենք հայտարարելու ստեղծումը «Արմինիերն Ծայնեսթ»-ին՝ զաստիարակչական և մշակութային ամսօրյա հանդեսի մը, որուն նպատակն է լայն զիծերու մեջ ներկայացնել հայկական ժառանգությունն ու լուրերը առարկայական և անկողմնակալ տեսանկյունից զիտված: Կհուսանք, որ մեր հրատարակությունը անցյալի և ներկայի հայ կյանքով պիտի հպարտացնե և հետաքրքրե ամբողջ աշխարհի մեջ տարածված մեր ընթերցողները»:

Ամսագիրը նոխ ձևավորված է, բաղկացած է 32 էջից, ապաքանակը 25000 է: Պարբերականի էջերում լուսարանվում են հայ ժողովրդի, մայր հայրենիքի, հայ մշակույթի և հայրենի ավանդույթների հարցերը: Հույս է տեսնում անգլերեն լեզվով: Ամսագրի առաջին համարը նվիրված է Կոմիտասի ծննդյան 100-ամյակին: «Խմբագրական կազմը որոշած է 2000 հավելյալ օրինակներ զրկել Միացյալ Նահանգներու նախագահին, փոխ-նախագահին, Դալիսի և Սերակույտի անդամներուն, նահանգներու կառավարիչներուն և բարձրագույն համալսարանի մատենադարաններուն: Հավելյալ օրինակներ պիտի զրկվին նաև 170 երկրներու կառավարական առաջնորդներուն և մատենադարաններուն»:

«Ջահակիր», 1 հոկտեմբերի

* * *

Դեկտեմբերի 13-ին Նյու-Յորքում տեղի է ունեցել Սովետական Հայաստանի հիսնամյակին նվիրված հանդիսավոր նիստ, որը բաց է արել տոնակատարության Նյու-Յորքի հանձնախմբի ատենապետ Արշավիր Քաղցրունին: Այնուհետև ելույթներ են ունեցել զրականագետ, «Նոր զիր» հանդեսի խմբագիր Բենիամին Նուրիկյանը, Վ. Զավենը, անգլերեն լեզվով ելույթ է ունեցել պրոֆ. Վաղգեն Բարսեղյանը և վերջում՝ Սովետական Միության Վաշինգտոնի փոխ-հյուպատոս Վլադիմիր Աղամյանը:

Հանդիսությունն ավարտվել է զեղարվեստական ճոխ բաժնով:

«Լրաբեր», 26 դեկտեմբերի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ